

Տարընթերցում.— Հար, որից և արտագրելով Լալ չեն հասկացել, որ թվականը գրված է հայոց փոքր (սարկավագագիր) տումարով, որ սկիզբ է առնում 1084 թվականին, այդ պատճառով ժամանակը հարցականով որոշել են մեր 606 թ. (551+55=606) և ավելացրել՝ Հար «հավանորեն Շե (505—1056 րր.)», իսկ Լալ «Թերևս Շե—1056»:

164. Նույն շարքի նա խաչքարի վրա

Հ ՌԾԱ Մ 1602

Հրատարակված է՝ Հար 296, Լալ 386

1 Մը խաչս բարեխաւս պը Գորկուն,

2 թվ. ՌԾԱ,

3 որդիք Դաւղի գաւրօվրին:

Մանրորչում.— 1. Երբորդ տողը պետք է կարգալ «Որդի Գաւթի գաւրավարին» 0 զրին այդտեղ աւ (տվյալ գեպքում ավ) գրի շփոթությունից է առաջացել:

2. Գորկը (Գորգ) Գեորգ անվան գավառական ձևն է:

Տարընթերցում.— 1. Հար, որից արտագրելով նաև Լալ թվականը բաց են թողել:

2. Լալ Գորկուն անձնանունը կարգացել է Մորկուն:

ԺԲ. ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՏՈՒՆ

165. Զափայտանների տոհմական սապանասան մուսֆի հակասակալ քարի վրա

(Լուս. № 91)

Հ ՈՂԸ Մ 1189

Հրատարակված է՝ Զալ 28, Արիմ 52, Հար 303, Լալ 392, Վիմ 37

1 Զաքարէ եւ Իւանէ, որդիք Մեծին Սարգսի շինեցաք զհանգստարանս, յիշեցէք ի Քս:

2 թվ. ՈՂԸ:

166. Նույն սապանասան ներսում, Սարգիս մեծի գերեզմանի զլիսին կանգնեցրած խաչքարի հակասին

Հ ՈՂԸ Մ 1187

Հրատարակված է՝ Զալ 28, Արիմ 52, Հար 304, Լալ 391, Վիմ 36

Նշան Մյ բարեխաւս լեր ամիրսպասալար հոոց (եւ) վրաց Սարգսի:

167. Նույն խաչքարի ստորին մասում

Հ ՈՂԸ Մ 1187

Հրատարակված է՝ Զալ 28, Արիմ 52, Հար 304, Լալ 391—392, Վիմ 36